

չափաւորապէս աշխատութիւն տալ իրենց և շարժման մէջ պահել. վասն զի անգործ և փակարանի կեանքը մի միայն պատճառ է այս կենդանւոյս ամիւթեանը՝ ինչպէս նաև զայրացկոտ և բարկացող բնութեանը: Այս առհասարակ ամենայն կենդանեաց վրայ կը տեսնուի և փորձով ալ ստուգուած է թէ շատ շարժող ու անհանդարտ կենդանիները աւելի բեղնաւոր կ'ըլլան. աս պատճառաւ է որ շունը, ճագարը, նապաստակը, խոզը, և ձկանց մէջէն ու մանք, որոնք միշտ շարժման մէջ են, աւելի բեղնաւոր են քան զայն կենդանիները, որոնք հանդարտ ու դանդաղ կեանք մը կ'անցընեն: Պ. Սօլիք Երկրագործութեան գրքին մէջ կ'ըսէ թէ կենդանիները բեղնաւոր ընելու համար պէտք է միշտ զիրենք շարժման ու աշխատութեան մէջ պահել, ինչպէս նաև էգն ալ երբեմն: Բնտարակոյս այս է պատճառը որ մարդկանց մէջ ալ անոնք որ աւելի մարմնական աշխատութիւններ կ'ընեն՝ աւելի բեղնաւոր են յորդեմնութիւն, քան թէ անոնք որք անաշխատ կեանք մը կ'անցընեն և կամ պարզ մտքերնին կ'աշխատցընեն: Վարձեալ փորձուած է որ տաք երկիրներու բնակիչքը՝ որոնք թոյլ ու մեղկ են բարուք, համեմատութեամբ քիչ որդի կ'ունենան քան հիւսիսային կողմի բնակիչները, որոնք չարքաշ ու գործունեայ կեանք մը կը վարեն: 1

Այս ամէն բաներս ըսելէն ետքը կ'աւելցնէ դարձեալ Պ. Սօլիք թէ “Պղին իր ուժին համեմատ շարժմունք տալը դիւրին բան է. վասն զի փոխանակ մեհեաններու մէջ դնելով զինքը պաշտելու՝ ինչպէս կ'ընեն Պանքոքի բնակիչները, և կամ փոխանակ նեղ փակարանի մը մէջ դնելու՝ ինչպէս ի Բարիզ և ուրիշ տեղեր կ'ընեն հետաքրքիր ժողովրդեան զբօսանք մը տալու համար, բաւական է զինքը միջակ ընդարձակութեամբ շրջափակել տեղ մը դնել ու աշխատցընել եթէ ծանր բեռներ տանելու, եթէ տեղէ տեղ բան փոխադրելու, և ասոնք մի միայն

արժանի տեսարաններ են ժողովրդեան հետաքրքրութեանը, ու իրաւցընէ հիւնալի տեսարաններ կրնան սեպուիլ: 1

(1) Կէպէտ և Պ. Սօլիքի այս առաջարկութիւնը անտեղի ու երեւակայական բան մը կրնայ երևնալ անոնց, որոնք որ իրենց տեսածէն ու գիտցածէն դուրս ուրիշ բան չեն ուզեր գիտնալ, բայց մեզի շատ հաւանական ու օգտակար առաջարկութիւն մը կը տեսնուի այս, և կարծենք որ շատ խելքով կ'ընէ մէկը, եթէ փոխանակ անօգուտ ու անշահ ծախուց այս բանիս վրայ աշխատի գովելի եռանդեամբ մը, որով այս կենդանիս օգտակար կարենայ ընել մեզի, զորն որ Բնտուածային նախախնամութիւնը մեզի պարգևեր է, և իրեք մասնաւոր ու յատուկ ձիրքերով ալ զարգարեր է, որք են նախ իր եղական ուժը, երկրորդ՝ իր զարմանալի սրամտութիւնը, և երրորդ՝ պատիճը: 1

#### Ծովու վրայ Միջատներ:

Բըւադարձին տակ ճամբորդութիւն ընող նաւերուն մէջ անբաւ բազմութեամբ խել մը տեսակ մանր միջատներ կը զեղանին, և ձանձրութե հետ մէկտեղ մեծ փնաս ալ կը պատճառեն նաւորդաց: Վարելի եղած ամէն հնարքը ի գործ դնելէն վերջն ալ, սարգով, ցորենի և պանրի ուտիճներով, հարիւրոտանի՝ ըսուած միջատներով, և այլն, նաւը կը լեցուի, և մեծ բազդ մը սեպելու է թէ որ միւսկն ալ չըլլայ: 1

Այս միջատներուն մէջ ամենէն աւելի անփնասը սարգն է. բայց ոչ մէկալ տեսակները, որոնք նաւորդաց համար Եգիպտոսի պատիժներէն մէկը կրնան ըսուիլ: Պատերազմական նաւը տեսայ, կը պատմէ գաղղիական նաւու հրամանատար մը, որուն մէջի եղած 16,000 հազարակրամի պաքսիմատը ցորենի ուտիճները բոլոր փոշի դարձուցեր էին. ասիկայ 20,000 Ֆրանգի



կորուստ մըն էր . բայց այս նիւթա-  
կան կորուստը բան մը ըսել չէ , այն ա-  
մէն աղէտից նկատմամբ՝ որ պատերազ-  
մական նաւու մը կրնայ հանդիպիլ բաց  
ծովու մը մէջ ասանկ բոլոր պաշարին  
փճանալէն , որոնց հետեւանքները մի  
առ մի համրելը աւելորդ կ'ըլլար , և  
ամէն մարդ ալ կրնայ գուշակել : Հա-  
րիւրոտանի ըսուածը համբարանոցին  
խոնաւ ծակերէն դուրս գրեթէ ամե-  
նէին չելլար , անոր համար ալ քիչ ան-  
գամ կը պատահի որ զմարդ խածնէ :  
Իսկ ուտիճին ձեռքէն բան մը ազատ  
չէ . ամէն բան իրեն ուտելու կու գայ ,  
ճարպեղէն եղեր է , կաշի եղեր է , ըզ-  
գեստ , ուտելիք , և այլն : Շատ ան-  
գամ կը հանդիպի որ եթէ մէկը շաքա-  
րոտած ջուր խմելէն ետքը՝ առանց լաւ  
մը բերանը սրբելու պառկած ըլլայ , առ-  
տուն պոկուկներ ուռած կ'ելլայ աս գար-  
շելի կենդանիներուն խածուածքէն :  
Եւ առատեաց միակ միւթարուծիւնը  
կը սեպուի ծխախոտը իրենց գիշերային  
պահպանութեանը ատեն . բայց թէ  
որ ուտիճը ծխախոտին տերեւին վրայէն  
քալած ըլլայ՝ անկարելի է ծխելը ա-  
ռանց փնասուելու : Եւսոնց էգերը իրենց  
հաւկիթը արելի ասուեղէն զգեստնե-  
րու վրայ կը ձգեն . և թէ որ հաւկիթ-  
նին մարդուս մորթին դպչի , վերք կը  
բացուի :

Որոշ չենք կրնար զուրցել թէ աս  
կենդանիները որ տեսակ միջատներու  
ցեղին տակ կ'երթան . բայց աս յայտնի  
կը տեսնուի՝ որ այլ և այլ դիրքերու հա-  
մեմատ տեսակնին ալ կը տարբերի ,  
թէպէտ և իրարու քիչ շատ նմանու-  
թիւն ունին : Այսներնին ընդհանրա-  
պէս գեղին է . իսկ մեծութիւննին քան  
զմեր սովորական սև մրջիւններէն ալ  
աւելի պզտիկ է : Թէ որ նաւը հին ըլ-  
լայ , քիչ մը աւելի կը մեծնան . վասն  
զի նաւուն տախտակամածներուն ձեղ-  
քուածքին մէջ ապաստանելով՝ կրծե-  
լով փոշի կը դարձնեն տախտակը , և  
անոնցմէ իրենց սնունդը կը գտնան :  
Շատ անգամ ալ կ'ըլլայ որ զգեստ մը  
թէպէտ և ամենայն խնամքով ծալած

ու պահած ըլլաս , մէյ մ' ալ քիչ ատե-  
նէն կը տեսնաս որ բազմութիւն մրջիւն-  
ներու բոյն ձգեր են մէջը և ըսել հարկ  
չկայ՝ բոլոր զգեստը փճացնելով : Թէ  
որ իրենց մնայ՝ նոյնպէս կը փնասեն նաւ  
պողոց և շաքարեղէններու . բայց ասոր  
առջեւ առնելու դիւրին հնարքը աս է ,  
որ ան անօթները որոնց մէջը կը դնեն  
շաքարը՝ բերաննին քօքոյի եղին մէջ  
թաթիւսած չուանով մը կապելու է :  
Պտուղներն ալ անփնաս պահելու հա-  
մար պէտք է զանոնք կախել , և չուա-  
նին կախած տեղին չորս կողմը բոլորակ  
մը քաշելու է կաւիճով : Մրջիւնները  
աս արգելքներուն դէմը չեն կրնար առ-  
նել . չգիտցուիր թէ արդեօք եղին ու  
կաւիճին վրայէն կը սահին վար կ'իյ-  
նան , չէ նէ քօքոյին սաստիկ հոտէն  
կը փախչին . որն որ ըլլայ նէ ալ՝ փոյթ  
չէ , բաւական է գիտնալը թէ աս է  
միակ դարման աս կենդանուոյ փնասէն  
խալըսելու ուտելիքները :

Եւ միջատներուս վրայ ալ ընդհան-  
րապէս կը տեսնուի մրջիւններու սովո-  
րական եղած յատկութիւնները , ինչ-  
պէս են երկայնամտութիւն , աշխատա-  
սիրութիւն ու աչալըջութիւն . օրինա-  
կի համար՝ թէ որ իրենց բոյնը կրելու  
կամ թէ ըսենք քիմքերնուն յարմար  
բան մը տեսնան , մէկէն իրարու իմաց  
կու տան և խուռն բազմութեամբ իրենց  
աւարին վրայ կը յարձրկին . տեսնալու  
բան է թէ ինչ կարգէ դուրս աշխատու-  
թիւն կ'ընեն շիտակ պատէն վեր հանե-  
լու համար ձեռք ձգած աւարնին . ա-  
նանկ որ երբեմն կ'ըլլայ որ ինչուան ե-  
րեսուն քառասուն անգամ պատէն վեր  
հանելու ատեննին վար գլորտըկին ու  
առանց յուսահատելու նորէն ձեռք կը  
զարնեն իրենց աշխատութեանը ին-  
չուան որ յաջողին իրենց բոյնը հանելու  
կրածնին :

Եւ ըսած դիտողութիւննիս ու տե-  
ղեկութիւնները ականատես մարդկանց  
փորձերովը ստուգուած են , որոնցմէ ա-  
ռած զրինք այս համառօտ յօդուածը :